## Արձանագրություն 2

### ՀՀ ՖՆ կարիքների համար « ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.05.2019թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Է. Պողոսյան** – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

***Անդամներ***

**Մ. Միքաելյան** - ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

**Ա. Գրիգորյան** – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

**Հ. Ղազարյան** - ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

**Կ. Սիրունյան** - ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի տնտեսվար

***Գնումները համակարգող***

**Ա. Աղաբաբյան** - ՀՀ ՖՆ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

**Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

1. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին***

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|
| «Գրիգոր Այվազյան» ԱՁ | ՀՎՀՀ՝ 84485538, էլ հասցե՝ xachagir@mail.ru |
| «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 04230785, էլ հասցե՝ hvac.service.armenia@gmail.com |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

## 2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերում բացակայում են ղեկավարի պաշտոնի, անվան և ազգանվան տվյալները: «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում արժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնին. ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված:

Մյուս մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/29 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում:

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված գները բարձր են տվյալ ընթացակարգի շրջանակում գնման հայտով սահմանված նախահաշվային գնից:

**Հանձնաժողովը որոշեց.**

1. «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշման 40-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գների նվազեցման նպատակով վարել բանակցություններ «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի հետ 10 րոպե տևողությամբ սույն թվականի մայիսի 23-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

**4. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/29 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել սույն թվականի մայիսի 23-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Է. Պողոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

____________ Մ. Միքաելյան

____________ Ա. Գրիգորյան

____________ Հ. Ղազարյան

____________ Կ. Սիրունյան

Գնումները համակարգող՝ ____________ Ա. Աղաբաբյան

Հավելված 1

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Գրիգոր Այվազյան» ԱՁ | | | «ԷՅՋ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | | |
| | | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին |
| 1 | շենքերում տեղակայված օդորակիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ (նախահաշվային գին՝ 1 000 000 ՀՀ դրամ) | 3 000 000 | | 3 000 000 | 1 580 000 | 280 000 | 1 896 000 |